ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծումը և սովետական կարգերի հաղթանակը պատմական երկարատև պրոցեսի արդյունք է և կապված է ամբողջ Ռուսաստանում, մասնավորապես Անդրկովկասում, բանվորական հեղափոխական շարժումների և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հանդես գալու հետ։

Անդրկովկասը XIX դ. վերջերից սկսած հաստատ կերպով ոտք է դնում զարգացման կապիտալիստական ուղու վրա, որը նպաստում է մի կողմից ազգային բուրժուազիայի ձևավորմանը, մյուս կողմից՝ պրոլետարիատի հանդես գալուն։ Չնայած դրան, երկրամասն ամբողջությամբ վերցրած, շարունակում էր մնալ Ռուսական կայսրության հետամնաց ծայրամասերից մեկը։ Կապիտալիստական հարաբերությունները թույլ էին շոշափել գյուղատնտեսությունը։ Ճորտատիրական հարաբերությունների մնացուկները խիստ զգացնել էին տալիս իրենց, իսկ բանվորների հիմնական մասսան իր կապերը դեռևս չէր խզել գյուղից և գտնվում էր մանրբուրժուական տարերքի ուժեղ ազդեցության տակ։

Աշխատավոր խավերի սոցիալական ճնշմանը այստեղ դումարվում էր նաև ցարիզմի ազգահալած քաղաքականությունը, որը համազգային ճնշման բնույթ էր կրում և ինքնակալության դեմ ըմբոստացնում ժողովրդի բոլոր խավերին։ Ցարիզմը, օգտվելով Անդրկովկասի ճնշվող ազգերի բուրժուազիայի հակասություններից, կանխամտածված կերպով ազգամիջյան խժդժություններ և ուղղակի կոտորածներ էր հրահրում՝ ինքնակալության դեմ տարբեր ազգերի աշխատավորների ընդհանուր պայքարի մեջ պառակտում մտցնելու համար։

Այս պայմաններում, բնականաբար, ցարական ինքնակալության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումներում չէր կարող առժամանակ իշխող դիրք չգրավել բուրժուազիան։ Սակայն ազգային-ազատագրական պայքարը սոցիալական խոր շարժում էր և նրա զարգացման տրամաբանությունը չէր կարող չսրել դասակարգային պայքարը բուն այդ շարժման ներսում։ Գյուղացիական ագրարային շարժումները, բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները միահյուսվում էին միմյանց հետ, վերածվում ինքնակալության և տիրապետող ազգի բուրժուազիայի դեմ ուղղված մի ընդհանուր համաժողովրդական շարժման։

Մյուս կողմից, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը նպաստում էր Անդրկովկասի տնտեսական կապերի ամրապնդմանը Ռուսաս-

---

* *Զեկուցում, կարդացված ԳԱ հոբելյանական ժողովում՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման և կոմունիստական կուսակցության կազմավորման 50-ամյակին։*

տանի հետ, որն իր հերթին կամուրջ էր ստեղծում ճնշված ազգերի ազգային-ազատագրական և Ռուսաստանում ծավալվող բանվորական հեղափոխական շարժումների միջև։

Այն նպաստում էր նաև Անդրկովկասում ծավալվող բանվորական շարժումների ինտերնացիոնալ կապերի ամրապնդմանը, պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության ձևավորմանը։

Ցարիզմի ազգահալած քաղաքականությունը և, հատկապես, էջմիածնի վանքապատկան հողերի բռնագրավման վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրատարակումը համաժողովրդական հուզումների ալիք բարձրացրեց ամբողջ Կովկասում։ Դաշնակցությունը ճարպկորեն օգտագործեց ազգային զգացմունքների վերելքը, սկսեց կառչել ցարիզմի դեմ ուղղված համաժողովրդական շարժմանը և ճանաչել ռուսահայ հարցի գոյությունը։ Դաշնակցությունը այդ շրջանում հայ իրականության մեջ հանդես էր գալիս որպես առավել ուժեղ և միաժամանակ առավել ռեակցիոն կուսակցություն, որը ձգտում էր ազատագրական պայքարի դրոշը վերցնել իր ձեռքը և այն ծառայեցնել իր քաղաքական շահերին։

Իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանում, երբ հայ իրականության մեջ ևս ուժեղացավ դասակարգային շերտավորումը ու սրվեց հակամարտությունը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ևս չէր կարող դուրս մնալ դարաշրջանի պատմական խնդիրների բովանդակությունից։

Հայ իրականության մեջ առաջացած դասակարգային երկու բևեռների գլուխ կանգնած էին՝ դաշնակցությունը, որպես հայ ձևավորվող բուրժուազիայի շահերի արտահայտիչ և սոցիալ-դեմոկրատիան, որպես ծնվող պրոլետարիատի քաղաքական և սոցիալական պայքարի առաջնորդ։

Սոցիալ-դեմոկրատական շարժման առաջացումն ու Լենինի ջանքերով բոլշևիկյան կուսակցության ստեղծումը նոր դարագլուխ բացեցին Ռուսաստանի նախկինում ճնշված բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի մեջ։

Արևելահայ իրականության մեջ XIX դ. 90-ական թվականներին մարքսիզմի՝ որպես քաղաքական հոսանքի հանդես գալն ամենանշանակալից երևույթն էր։ Սոցիալիզմի գաղափարները միանգամից չէ, որ տիրապետեցին մասսաներին։ Ինչպես հայտնի է, ճնշված ազգերի մոտ նացիոնալիզմը պարարտ հող ունի, որովհետև այն ուղղված է տիրապետող ազգի իմպերիալիստական բուրժուազիայի ճնշման դեմ։ Այդ է պատճառը, որ բուրժուա-ազգայնական կուսակցությունները պատմականորեն հող են ունեցել հանդես գալու և որոշակի ժամանակահատվածում իրենց ազդեցությունը տարածելու աշխատավորական հետամնաց խավերի վրա։ Սակայն ազգային-ազատագրական պայքարի բովում, երբ սրվում է դասակարգային պայքարն ազատագրական շարժման խնդիրների շուրջը, դրսևորվում է ազգային բուրժուազիայի և նրա շահերն արտահայտող կուսակցությունների նացիոնալիզմի ռեակցիոն կողմը, որն ուղղված է բուն աշխատավորական զանգվածների շահերի դեմ։

Այդ պայքարից դուրս չի մնացել նաև հայ ազգային բուրժուազիան՝ իր կուսակցություններով հանդերձ։

Հայ բուրժուազիան իր ժողովրդի շահերով քիչ է մտահոգվել։ Չնայած երբ, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հայկական բուրժուազիան տնտեսական առավել հզոր դիրքեր ուներ Կովկասում, նա իր ամբողջ գոյության

ընթացքում կապիտալ ոչ մի խոշոր ներդրում չկատարեց Հայաստանում, չհոգաց արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման մասին։ Տնտեսապես կախված լինելով ռուսական բուրժուազիայից, նա «հայրենասիրություն» էր խաղում միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր լինում օգտագործել ժողովրդին՝ ճնշող կամ հարևան ազգերի բուրժուազիայի դեմ պայքարելու համար։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը. «Այդ է բուրժուազիայի դասակարգային շահերի, դասակարգային քաղաքականության օրենքը բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում»[1]։

Այնքանով, որքանով հայ ազգային բուրժուազիան հանդես էր գալիս ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի ճնշման դեմ, այդքանով նա դրրսևորում էր իր նացիոնալիզմի համադեմոկրատական կողմը։ Բայց քանի որ մեր ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները գնալով ավելի ու ավելի էին կապվում ռուսական բանվորական հեղափոխական շարժումների հետ, հայկական բուրժուազիան աստիճանաբար հրաժարվում էր ինքնակալության նկատմամբ ունեցած իր օպոզիցիոն դիրքերից, կանգնում իր և նրա դասակարգային ընդհանուր շահերի դիրքերում։ Ահա թե ինչու հայկական բուրժուազիան և նրա կուսակցությունները չէին կարող մեր ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների առաջնորդը լինել։ Այս առումով էլ սոցիալ-դեմոկրատիայի հանդես գալը պատահական երևույթ չէր։ Այն մեր ժողովրդի ազատագրական պայքարի բնական արդյունքն էր։

Աշխատավորական լայն խավերը դասակարգային պայքարի տրամաբանությամբ սկսեցին շփվել սոցիալիզմի գաղափարներին։

Հանդես գալով ՌՍԴՐԿ երկրորդ համագումարում, Բոգդան Կնունյանցը նշել է, որ ազգային-ազատագրական շարժումների շուրջը սոցիալ-դեմոկրատների և ազգայնականների միջև ծագած վեճը 900-ական թվականների սկզբներին թափանցել էր հայ հասարակության բոլոր խավերը, որ սոցիալ-դեմոկրատները մեծ դժվարությամբ են կարողացել հաղթահարել հայ բանվորների անվստահությունը սոցիալիստական շարժման նկատմամբ, որը, սակայն, 1902 թ. վերջերից արդեն դարձել էր մեծ ուժ հայ իրականության մեջ[2]։

Հասարակական կյանքն էր, որ իր բնականոն զարգացման ընթացքում ստուգում էր քաղաքական կուսակցությունների ու հոսանքների ծրագրերի և պրակտիկ գործունեության համապատասխանությունը։ Եվ եթե սոցիալական տարբեր ուժերի և նրանց շահերն արտահայտող կուսակցությունների ու հոսանքների կատաղի պայքարի բովում կյանքն առաջին պլանի վրա մղեց սոցիալիզմը, իսկ սոցիալ-դեմոկրատներին դարձրեց ոչ միայն բանվոր դասակարգի, այլև ճնշված ազգերի աշխատավոր զանգվածների առաջնորդ, բացատրվում է նրանով, որ Լենինի ստեղծած կուսակցությունը արտահայտում էր բանվորական և ազգային-ազատագրական շարժումների արմատական շահերը։ Հակառակ դեպքում հեղափոխական այդ երկու ուժերի միջև չէր կարող ստեղծվել դաշինք։

Եվ բնական է, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը աստիճանաբար միահյուսվեց նրա բանվորական շարժման հետ, դարձավ նրա մարտական ռեզերվը։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 13։

2 Տե՛ս Второй съезд РСДРП, Протоколы, М., 1959, стр. 515, 530 и др.

Բանվորական շարժումը նեղ ազգային բնույթ չի կարող կրել։ Նրա դասակարգային բովանդակությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձնում միևնույն պետության, և նույնիսկ նրա սահմաններից դուրս, տարբեր ազգերի բանվորների դասակարգային համերաշխությունը։ Այդ է պատճառը, որ բանվորական շարժման հանդես գալը զուգորդվում է զուտ ազգային շարժումների թուլացմամբ։

Ահա թե ինչպես է գնահատում այդ պրոցեսը Անդրկովկասում ցարական պահնորդական բաժինը՝ 1900 թ. դեկտեմբերին կառավարությանն ուղղված մի հաղորդագրության մեջ. բանվորական «խմբակները կազմակերպվում են անկախ ազգային պատկանելիությունից, ռուսներից, վրացիներից, հայերից, որոնք միավորված են պրոլետարիատի ընդհանուր նպատակներով, որով և բացատրվում է վերջին շրջանում ազգային քաղաքական շարժումների խիստ թուլացումը»[3]։

Այս պրոցեսը Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդող ամբողջ շրջանում խորանում է։ Լենինյան-իսկրայական խմբակները, որոնք բոլշևիկյան կազմակերպությունների հիմքն էին, ղեկավարում էին մասսաների բոլշևիկացման պրոցեսը, սոցիալիզմի գաղափարները ներմուծելով բանվորական շարժման մեջ։ Այսպիսով, արևելահայ քաղաքական հոսանքների պատմությունը դա երկու աշխարհայացքների՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բուրժուական նացիոնալիզմի միջև համառ և երկարատև, կատաղի դասակարգային պայքարի պատմություն է։

Դաշնակցությունը փորձում էր իրեն ներկայացնել որպես «համազգային» շահերի պաշտպան, որպես գյուղացիական դեմոկրատիայի շահերի արտահայտիչ, իսկ բանվորական հեղափոխական շարժման վերելքի շրջանում նույնիսկ որպես «սոցիալիստական» կուսակցություն։

Սակայն հայտնի է, որ դասակարգային հասարակության մեջ քաղաքական կուսակցություններն ու հոսանքները չեն կարող ապադասակարգային լինել։ Պատմությունն այդպիսի օրինակներ չունի։ Դաշնակցությունը ևս բացառություն չի կազմել։

Հայ իրականության մեջ խոշոր բուրժուազիան ստվար խավ չի կազմել, բայց այդ հանգամանքը չի բացառել նրա խաղացած դերը քաղաքական կյանքում։ Նա իր ուրույն դրոշմն է գրել հայկական իրականության վրա։ «Մենք,— գրել է Ստ. Շահումյանը 1906 թ.,— ունենք արդեն... բուրժուազիա և պրոլետարիատ՝ իսկական եվրոպական իմաստով»[4]։ Հայաստանն իր սոցիալական պատկերով, այնուամենայնիվ, մնաց որպես մանրբուրժուական երկիր։ Մանրբուրժուական դեմոկրատիան պատահական քաղաքական ձևավորում չէ։ Վ. Ի. Լենինի բնութագրությամբ, նա կապիտալիզմի անհրաժեշտ արդյունքն է, որի բաղան միայն գյուղացիությունը չէ։ Ծնված լինելով կապիտալիստական հասարակարգի ընդերքից, նա մի կողմից ձգտում էր դեպի ռեակցիոն դասակարգերը, իսկ մյուս կողմից դեպի պրոլետարիատն ու դեմոկրատիզմը։

Իր էությամբ, լինելով բուրժուա-նացիոնալիստական, դաշնակցությունը հանդես չի եկել որպես մանր բուրժուազիայի շահերն արտահայտող կուսակցություն։ Նրա վարիչները հենվել են մանր բուրժուազիայի՝ դեպի ռեակցիոն

---

[3] ЦГАОР СССР. ф. ДПОО. оп. 1898, ед. хр. 5, ч. 52, л. 12.

[4] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1953, էջ 28։

դասակարգերն ունեցած ձգտման վրա. պայքարելով նրա դեմոկրատիզմի դեմ: Եվ պատահական չպետք է համարել, որ Ստ. Շահումյանը դաշնակցությունը համարում էր բուրժուազիայի «հարազատ զավակ» և նրա ծննդյան ծագումը կապում էր ոչ թե դեմոկրատական հոսանքների, այլ «նախկին կղերական-պահպանողական «ազգասիրության» տեղ» նրևան եկած «բուրժուական լիբերալիզմի» հետ, նրան հակադրելով սոցիալիզմը որպես «ամենաբնորոշ դիծ մեր նորագույն կյանքի», որն ուներ իր քաղաքական կուսակցությունը՝ հանձինս սոցիալ-դեմոկրատիայի[5]:

Մինչև ռուսական առաջին հեղափոխության վերելքը հայկական բուրժուազիան, որպես ճնշվող ազգի բուրժուազիա, հետևաբար և նրա կուսակցությունը, օպոզիցիոն դիրք ունեին ցարիզմի նկատմամբ: Այստեղ էր, որ դրսևորվում էր ճնշված ազգի բուրժուազիայի նացիոնալիզմի այն համադեմոկրատական էլեմենտը, որի հայտնի բնորոշումը տվել է Վ. Ի. Լենինը: Սոցիալ-դեմոկրատները չէին խորշում այդ մոմենտն օգտագործել ցարական ինքնակալության դեմ մղվող համաժողովրդական պայքարին ուժ տալու համար, և նույնիսկ երբեմն ազգայնական կուսակցությունների հետ համատեղ հակացարական թռուցիկներ էին հրատարակում:

Այս հանգամանքը, հասկանալի է, որ չի կարող մեզ հիմք տալ վերանայելու բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն կուսակցության սոցիալական էությունը:

Հայ սոցիալ-դեմոկրատները պայքար էին մղում ոչ միայն դաշնակցության, այլև, այսպես կոչված, «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» («սպեցիֆիկների») և մյուս հակալենինյան խոշոր ու մանր խմբավորումների դեմ, որոնք, ըստ էության, փորձում էին մեկուսացնել հայ բանվորական շարժումը և այն հակադրել Ռուսաստանի հեղափոխական բանվորական շարժմանը:

Կովկասյան արդյունաբերական կենտրոնների հայ բանվորությունը, առաջավոր ինտելիգենցիան ու երիտասարդությունը գնում էին սոցիալ-դեմոկրատների հետևից: Այն փաստը, որ դեռևս 1902 թ. ստեղծվեց Լենինի բարձր գնահատականին արժանացած «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որ 1903 թ. ժնևում Լենինը մտածում էր կազմակերպել հայերեն լեզվով գրականության հրատարակություն, որին, ինչպես ինքն է գրում «ձեռնամուխ էին եղել կոմպետենտ ընկերներ»[6], հայեր, որ 1904 թ. Պետերբուրգում հայ ուսանողները փորձում են հրատարակել մարքսիստական լեգալ ժողովածու և այդ առիթով դիմում են Լենինին, և վերջապես այն փաստը, որ արդեն 1903—04 թթ. բուն Հայաստանի կենտրոններում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, վկայում են հենց այդ մասին:

Այսպիսով, XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ձևավորվում է հայ ազգային բուրժուազիան և հանդես է գալիս պրոլետարիատը, սրվում է դասակարգային շերտավորումը հայ իրականության մեջ, հանդես են գալիս իրար դեմ կանգնած քաղաքական ուժեր, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է իր դասակարգի շահերին համապատասխան ուղղություն տալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին:

---

5 Նույն տեղում, էջ 29.

6 Տե՛ս В. И. Ленин, ПСС, т. 46, стр. 310—311.

Ի՞նչ էտապներ է անցել այդ պայքարը։

Արևելյան Հայաստանում բանվորական և ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ կարելի է նշմարել երեք էտապ։ Առաջինն ընդգրկում է բանվորական շարժման հանդես գալուց մինչև 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը։ Այդ էտապում հաճնշված ազգի, ինչպես և ցարիզմի կողմից ճնշված մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներն ուղղված էին ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի և ինքնակալության դեմ։ Եվ չնայած այդ շարժման բուրժուական բնույթին, պրոլետարիատը պաշտպանում էր նրա համադեմոկրատական պահանջները, միաժամանակ հանդես գալով բուրժուազիայի ազգային բացառիկության ձգտումների դեմ։

Ազգային-ազատագրական պայքարը, ուղղված լինելով ցարիզմի ազգային ու սոցիալական ճնշման քաղաքականության դեմ, իր սոցիալական բնույթով հանդես էր դալիս որպես ռուսաստանյան պրոլետարիատի դասակարգային պայքարի ռեզերվ։

Բուն Հայաստանում, արդյունաբերական բանվորության բացակայության պատճառով բանվորական շարժումները թույլ էին։

Կապված լինելով Անդրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոնների հետ, հայ բանվորությունը հանդես չէր գալիս որպես առանձին ձևով ազգային բնույթ կրող շարժման առաջնորդ։ Նրա դասակարգային պայքարը սերտորեն շաղկապված էր ամբողջ Ռուսաստանում ծավալվող բանվորական շարժմանը, որի հաղթանակի մեջ էին սոցիալ-դեմոկրատները տեսնում հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրման հեռանկարները։ Բայց այս հանգամանքը չի նսեմացնում հայ բանվորության խաղացած դերը երկրամասի բանվորական շարժման մեջ։ Այդ դերն այնքան մեծ էր, որ լենինյան «Վպերյոդ» թերթի վկայությամբ ցարական սատրապները Անդրկովկասի բանվորական բոլոր ելույթներին վերագրում էին հայկական շարժման բնույթ, որն իբր նպատակ է ունեցել «տապալել ռուսական ցարին և տեղը դնել հայի»[7]։

Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Սուրեն Սպանդարյանը, Անաստաս Միկոյանը, Սարգիս Կասյանը, Արտաշես Կարինյանը, Արշավիր Մելիքյանը և տասնյակ ու տասնյակ այլ հեղափոխական հայ գործիչներ ռուս, վրացի, ադրբեջանցի և այլազգի գործիչների հետ միասին հանդես էին դալիս որպես ամբողջ Անդրկովկասի բանվորական շարժման ղեկավարներ։

Այս էտապում ազգային հարաբերություններն Անդրկովկասում գնալով սրվում են։ Երիտթուրքերը մահմեդական նացիոնալիստական կազմակերպություններից իրենց գործակալություններն էին ստեղծում Կովկասում և պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի գաղափարների կատաղի պրոպագանդա մղում։ Վրացական սոցիալ-ֆեդերալիստները Վրաստանի ավտոնոմիային էին ձգտում՝ սրելով հակասությունները հարևան ազգերի հետ։ Իսկ դաշնակցությունն էլ, իր հերթին, ձեռք էր մեկնում երիտթուրքերին և դրանով իսկ առիթ տալիս ցարական ինքնակալությանն ուժեղացնելու իր ազգահալած քաղաքականությունը։

Մենշևիզմի պառակտիչ քաղաքականությունը, իր հերթին, թուլացնում էր բանվորական շարժման թափը երկրամասում։ Գաղափարական հարցերում

---

7 Տե՛ս «Вперед», № 10 15(2) մարտի, 1905։

տարընթացությունը սրվում էր ստոլիպինյան ռեակցիայի ուժեղանալուն զուգընթաց։

Սակայն թե՛ ռեակցիայի, և թե՛ բանվորական շարժման վերելքի տարիներին ազգային-ազատագրական շարժումները չդադարեցին։ Բոլշևիկները բայլ առ քայլ պայքարում էին այդ շարժումները պրոլետարական հունով ուղղելու համար։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանի բոլշևիկները հանդես էին գալիս պատերազմի և խաղաղության հարցերում լենինյան դիրքերի պաշտպանությամբ։

Ազգային հարցը այդ շրջանում խիստ սուր բնույթ էր կրում։ Ըստ էության ազգային հարցի ճիշտ դրվածքից էր կախված ճնշված ազգերի ազատագրական շարժումները բանվորական հեղափոխական շարժումներին միակցելու հարցը։ Լենինի, մեր կուսակցության ամբողջ գործունեությունը նպատակամղված էր ճնշված ազգերի ազատագրական շարժումները միահյուսել բանվորական հեղափոխական շարժումներին և համաժողովրդական ցասումն ուղղել միապետության դեմ, իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի։

Համաշխարհային պատերազմը ահավոր չարիքներ բերեց հայ ժողովրդին։ Թուրքական ջարդարարները, որոնք վաղուց ի վեր մշակել էին հայերի բնաջնջման իրենց քաղաքականությունը, ամենագազանային մեթոդներով ձեռնամուխ եղան դրա իրագործմանը։ Պատմությանը մինչ այդ հայտնի չէ որևէ այլ փաստ, որ տիրապետող ազգը, օգտվելով իր հպատակ ազգի անօգնականությունից, այդպիսի մասսայական ցեղասպանության դիմի, ինչպես դա արեցին թուրքական բռնակալները հայ խաղաղ բնակչության նկատմամբ։

Ոչինչ և ոչ ոք չի կարող արդարացնել մոտ երկու միլիոն հայերի գազանային սպանությունը։ Կոտորածները տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում, բայց դրանց հետևանքները խիստ ծանր նստեցին նաև արևելահայության վրա։ Թուրքական բարբարոսները Արևմտյան Հայաստանում հայկական հարցը, ըստ էության, լուծեցին համիդյան քաղաքականության ոգով և հայ ժողովրդի տարբեր պետություններում ապրող երկու հատվածներին զրկեցին միավորվելու հնարավորության հեռանկարներից։

Թուրքական մարդասպանները չէին կարող իրագործել իրենց քաղաքական ծրագրերը, եթե համոզված չլինեին իմպերիալիստական աշխարհի «չեզոքության» մեջ։ Այս միտքն հաստատող շատ փաստեր կան ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված հայտնի փաստաթղթերի մեծարժեք ժողովածուում[8]։

Երբ ավարտված էր մի ամբողջ ազգի խոշոր հատվածի բնաջնջումը, ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ իր իսկ հորդորանքով ստեղծված հայկական կամավորական ջոկատների կազմալուծմանը, որովհետև, ինչպես ցարական ժանդարմական վարչության դիրեկտորն էր գրում «Հայաստանին խոստացած ավտոնոմիայից Ռուսաստանի հրաժարվելու դեպքում այդ նույն կամավորականները կարող էին դառնալ պատրաստի զինված կադրեր ռուսական կառավարության դեմ պայքարելու համար»[9]։

---

8 Տե՛ս Геноцид армян в Османской пмперин. Под редакцией академика М. Г. Нерсисяна, Е., 1965.

9 Տե՛ս ЦГАОР СССР, ф. 102, оп. 1915, ед. хр. 14, ч. 92 Б, л. 60.

Սա այն քաղաքականությունն էր, որը «նախատեսում և որից սկզբից ևեթ նախազգուշացնում» (Շահումյան) էին բոլշևիկները։ Կամավորական շարժումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրսևորումներից մեկն էր։ Այդ փաստը ոչ ոք չի կարող ժխտել։ Նրան մասնակցած հարյուրավոր ու հազարավոր հայեր ազնվորեն հավատում էին, որ ցարիզմի հաղթանակը պատերազմում ազատություն կբերի արևմտյան հայերին։ Այս առումով մենք չենք կարող այդ շարժմանը մասնակցած ու հայ ժողովրդի ազատագրության տենչով տոգորված նահատակների հիշատակը չհարգել։ Բայց և չենք կարող չդատապարտել դաշնակցություն կուսակցության դիրքորոշումը, քանի որ նա սպեկուլյացիայի ենթարկելով մեր ժողովրդի ազգային նվիրական զգացմունքները, իր անհեռատես քաղաքականությամբ մեր ազգային նավը դեմ արեց անանցանելի ժայռերի, մեկուսացրեց այն և դրանով իսկ, փաստորեն, նպաստեց, որ մեր ժողովրդի թշնամիները՝ հաշվեհարդար տեսնեն նրա հետ։

Այս առումով պետք է հասկանալ Ստ. Շահումյանի և ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների 1915 թ. խորհրդակցության տված հանրահայտ գնահատականը՝ կամավորական շարժման հարցում դաշնակցականների վարած քաղաքականության նկատմամբ։

Ցարիզմի տապալումից հետո աշխուժացան ազգային բուրժուազիայի ձգտումներն ազգային պետականություն ստեղծելու ուղղությամբ (ոչ միայն հայկական)։ 1917 թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակից մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխության հաղթանակն ընկած ժամանակահատվածը կարելի է բնորոշել որպես նոր էտապ ազգային-ազատագրական և բանվորական շարժման մեջ։

Հայկական ջարդերը Թուրքիայում, հարյուր-հազարավոր հայերի արտագաղթը, պատերազմի ավերածությունները, սովն ու համաճարակները արյունաքամ էին արել իր ֆիզիկական գոյության համար հաստատակամ մաքառող հայ ժողովրդին։ Թվում էր, թե երկրի երեսից իսպառ բնաջնջվում է հազարամյա մշակույթ ունեցող մի ժողովուրդ։ Այս էր պատճառը, որ երբ դաշնակցությունն հանդես եկավ բուրժուական պետականություն ստեղծելու լոզունգով, նա հարություն տվեց իր մեռած ակցիաներին և կարողացավ իր օջախն ունենալու տենչով տոգորված հայ դեմոկրատիային առժամանակ տանել իր հետևից։

Սակայն, սարսափելով վերահաս սոցիալիստական հեղափոխության ուրվականից, դաշնակցությունը դասակարգային համերաշխության ձեռք մեկնեց ժամանակավոր կառավարությանը, դարձավ նրա կամակատարներից մեկը Անդրկովկասում, իր ամբողջ հույսերը կապելով ռուսական բուրժուազիայի հետ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի բանվորական հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումները նոր էտապ թևակոխեցին։ Եթե մինչ այդ ազգային բուրժուազիան հետաքրքրություն էր դրսևորում աշխատավոր մասսաների ազատագրական պայքարի նկատմամբ, նպատակ ունենալով այն ծառայեցնել իր շահերին, ապա այժմ, երբ այդ պայքարը ձուլվել էր երկրամասում սովետական իշխանության համար մղվող պայքարին, դաշնակցությունը, հետամուտ դասակարգային իր շահերին, հանդես եկավ որպես հեղափոխության ամենակատաղի թշնամի, իր ամբողջ հույսերը կապեց ռուսական սպիտակգվարդիականության և օտարերկրյա

իմպերիալիստների հետ, դարձավ նրանց հլու գործիքը Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն իրոք նոր դարաշրջան բացեց մարդկության պատմության մեջ։ Դա հաստատված է համաշխարհային զարգացման ավելի քան կեսդարյա պատմությամբ։ Դեռ չէին լոել Հոկտեմբերի համազարկերը, երբ Վ. Ի. Լենինն իր հայացքը կրկին սևեռեց հայկական հարցի վրա, այն բարձրացրեց համապետական նշանակություն ունեցող հարցերի մակարդակի և հռչակեց «Թուրքահայաստանի» անկախության մասին հանրահայտ դեկրետը։

Սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության մեղքը չէր, որ «Թուրքահայաստանի մասին» լենինյան դեկրետը չիրագործվեց ամբողջությամբ։ Երկրի միջազգային դրությունն անհնար դարձրեց լուծելու այդ և մի շարք այլ հարցեր։

Խոսելով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ազգային ծայրամասերում, այդ թվում և Կովկասում դասակարգային ուժերի փոխհարաբերության մասին, Վ. Ի. Լենինը, որպես հատկանշական երևույթ, նշում էր բուրժուական նացիոնալիզմի և պրոլետարական-գյուղացիական հեղափոխության միջև մղվող պայքարը։

Ծայրամասերի ազգային բուրժուազիան Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքը փորձում էր մեկնաբանել որպես բուրժուազիայի ինքնորոշման իրավունք, որի դեմ վճռական հանդես էին գալիս բոլշևիկները։ Ազգային բուրժուական պետականություն ստեղծելու ձգտումը չէր կարող ներդաշնակ լինել պրոլետարիատի շահերին։

Կյանքը ապացուցեց բոլշևիկների դիրքորոշման ճշմարտացիությունը։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները երկրամասը հայտարարեցին Սովետական Ռուսաստանից անջատված։ Դա նպաստեց գերմանա-թուրքական զորքերի անկաշկանդ առաջխաղացմանը երկրի խորքը, որը թանկ նստեց հայ ժողովրդին, նրան բերելով նոր զրկանքներ ու տառապանքներ, հազարավոր մարդկային նոր զոհեր։

1918 թ. գարնանը երկրամասում ստեղծված ներքին և արտաքին պայմանները նպաստեցին դաշնակցականներին Հայաստանում իշխանության գլուխ անցնելու։ Դաշնակցականները պետական կառավարման լիակատար անընդունակություն դրսևորեցին։ Նրանց խոստացած «դրախտ» Հայաստանը վերածվեց սովի ու աղքատության, որբերի ու համաճարակների, արցունքի ու բաղցի երկրի։ Դաշնակցականների իշխանության գլուխ անցնելը նշանավորվեց թուրքերի հետ կնքած Բաթումի 1918 թ. հունիսի պայմանագրով, որով «Հայաստանը» սահմանափակվում էր Երևանով և նրա շրջակայքով։

Ինչպե՞ս պատահեց, որ Թուրքիայի կառավարողները, չհասած իրենց հայաջինջ քաղաքականության ավարտին, այնուամենայնիվ, ստորագրեցին Բաթումի պայմանագիրը, որը խիստ ստորացուցիչ էր մեր ժողովրդի համար և որը, սակայն, թուրքերի կողմից «մեծ զիջում» էր դիտվում։

1918 թ. գարնանը Ղտրաքիլիսայի և Սարդարապատի տակ հայ աշխատավորները մեծ ջարդ տվին հղփացած թուրքական օկուպանտներին։ Ղարս.քիլիսան և Սարդարապատը ցույց տվեցին թուրքական անզուսպ ջարդարարներին, որ հայ ժողովրդի դիմադրական ոգին հաղթահարված չէ և իրենք չեն կա-

բող Կովկասում հայերին բնաջնջել նույն հեշտությամբ, ինչը նրանց հաջողվեց անել Արևմտյան Հայաստանում։

Փոխվել էին ժամանակները, փոխվել պայմանները։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը հավատ էր ներշնչում հայ ժողովրդին՝ նրա աղատադրական պայքարում, բարձրացնում նրա դիմադրական ոգին։

Մերժելով Սովետական Ռուսաստանի հետ դաշինքի քաղաքականությունը, որին ձգտում էին հայ ժողովրդի աշխատավորական բոլոր խավերը, դաշնակցությունն իր կառավարման ամբողջ շրջանում Հայաստանը դարձրեց դիվանագիտական խաղերի առարկա։ Վրաց մենշևիկների և մուսավաթականների հետ միասին թշնամություն սերմանեց եղբայրական ժողովուրդների միջև և կրկին Հայաստանը մեկուսացրեց ու մեն-մենակ կանգնեցրեց մեր անարդ թշնամու առաջ։

Դաշնակցության ճիգերը հայ դատն ամերիկյան իմպերիալիստների ձեռքն հանձնելու ուղղությամբ ոչինչ լավ բան չէին խոստանում հայ ժողովրդին։ Ամերիկյան իմպերիալիստները, որոնք ձգտում էին ճանկել հայկական մանդատը, երբեք էլ մտահոգված չէին հայ ժողովրդի անկախության հարցով։ Նրանց քաղաքական դեմագոգիան հետամուտ է եղել հայկական հարցն ամերիկյան իմպերիալիզմի շահերին ծառայեցնելուն։ Մեր պատմագրությունն ամերիկյան պաշտոնական աղբյուրների հիման վրա անհերքելիորեն ապացուցել է այդ փաստը։

Դաշնակցականները թալանի էին ենթարկում գյուղերն ու քաղաքները, կեղեքում և անասելի հարստահարում առանց այն էլ արյունաքամ եղած աշխատավոր մասսաներին։ Կառավարական գրասենյակները ողողվում էին Հայաստանի գավառներից դաշնակ տիրակալներին ուղղված և անպատասխան մնացած հարյուրավոր հեռագրերով ու գիմումներով, որոնցով սովի և աղքատության, համաճարակների ճիրաններում տառապող գյուղացիներն ու բանվորները կառավարությունից հաց ու դեղորայք էին աղերսում։

Այսպես էին դաշնակցականները «փրկում» ազգը։

«Հայաստանում,— գրել է Ս. Կասյանը 1919 թ. վերջերին,— գոյությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք»[10]։

Տանջանքից և հառաչանքից հայ ժողովրդին փրկելու միակ ելքը բոլշևիկները տեսնում էին այն աշխարհի մեջ, որի արշալույսը բացվել էր ռուսական հյուսիսում։ Երկրում ստեղծված քաղաքական իրադրությունը պահանջում էր միավորել Հայաստանի անջատ-անջատ գործող բոլշևիկյան կազմակերպությունների ջանքերը՝ սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման գործում իր որոշակի տեղն ունի «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» (այսպես կոչված «Հայկունու խումբը»)։ Դեռևս 1959 թ. մենք ծանոթացանք ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Կազմբյուրոյի որոշումներին «Հայաստանի կոմունիստական կուսակցության» վերաբերյալ[11]։

1918—1920 թթ. ընթացքում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն և Կազմբյուրոն, որոնց նիստերից շատերին անձամբ մասնակցել է Վ. Ի. Լենինը, այդ

---

10 Ս. Ատենյան, Ո՞ւր է ելքը, հրատ. «Կարմիր աստղ», 1919, էջ 1։

11 Այդ փաստաթղթերը հրատարակված են մեր «Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922» գրքում, Երևան, 1969, էջ 309—335։

կազմակերպության վերաբերյալ ընդունել են մոտ երկու տասնյակ որոշումներ։ Դրանց հիմնական բովանդակությունը վկայում է այն մասին, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը, անձամբ Վ. Ի. Լենինն այն ընդունել են որպես մի կազմակերպության, որը պետք է գործեր ամբողջ Հայաստանի տերիտորիայում, չնայած նրա ստեղծման պատմությունը իրոք կապված էր «Թուրքահայաստանի մասին» լենինյան դեկրետի հետ։ Սկզբից ևեթ ՌԿ(բ)Կ Կենտկոմը այդ կազմակերպությունն ընդունում էր որպես իրոք Հայաստանի կոմունիստական կուսակցություն, առանց երկփեղկման։

Մեր հայտնաբերած փաստաթղթերից առաջինը Հայաստանի կոմունիստական կուսակցության 1918 թ. ապրիլի զեկուցագիրն է, ուղղված ՌԿ(բ)Կ Կենտկոմին, որտեղ հիմնավորված է հայ կոմունիստների նախաձեռնությամբ այդ կազմակերպության ստեղծման անհրաժեշտությունը և կազմակերպական ինտերնացիոնալ սկզբունքը։ 1919 թ. մարտին „Известия Петербургского Коммисариата по делам национальностей" ժուռնալը տպագրել է «Հայկական պրոլետարիատը և կոմունիզմը» հոդվածը, որտեղ բառացիորեն գրված է. «Այդ կուսակցությունը ստեղծվել է Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի որոշմամբ։ Այդ կուսակցությունը նպատակ է ունեցել կոմունիստական պրոպագանդա մղելու Հայաստանը բնակեցնող ժողովուրդների մեջ»։

Այդ է ապացուցում նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոյի 1919 թ. մայիսի 19-ի որոշումը, որով իրավունք է տրվում Հայաստանի կոմկուսին կազմակերպելու մարզային բյուրոներ և անցկացնելու «բոլոր մարզերի ներկայացուցիչների կոնֆերանս»։ Իսկ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոյի 1919 թ. սեպտեմբերի 19-ի որոշման մեջ, որն ընդունվել է Գ. Հայկունու զեկուցման հիման վրա, ասված է. «Ձևականորեն անկախ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը Հայաստանի անկախ հանրապետության սահմաններում պետք է գոյություն ունենա»։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի 1919 թ. դեկտեմբերի 20-ի որոշման մեջ, որն ստորագրել է Վ. Ի. Լենինը, նշվում է. «ընդունելով անհրաժեշտ ՌԿԿ Կովկասյան երկրային կոմիտեի ենթակայությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության գոյությունը որպես տերիտորիալ կազմակերպություն՝ գոյություն ունեցող Հայկական հանրապետության սահմաններում հիմք ընդունել Հայկունու բանաձևը և հրահանգի նախագիծը»։ Այդ որոշումն ընդունվել է Երկրային կոմիտեի անունից ՌԿ(բ)Կ Կենտկոմին ներկայացրած 1919 թ. նոյեմբերի 9-ի զեկուցագրի մանրամասն քննարկումից հետո, մի զեկուցագիր, որով երկրային կոմիտեն դեմ էր դուրս գալիս ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի և Ադրբեջանի առանձին կոմունիստական կուսակցություն ստեղծելուն։

Իզուր չէր հենց այդ օրերին Ա. Ի. Միկոյանը գրում Երկրային կոմիտեին, որ «համարյա ամբողջ Կենտկոմը և Ստալինը, Ստասովան, Օրջոնիկիձեն, Ավանեսովը և մյուսները ամուր կանգնած են նրանց (ՀԿԿ-ի— Գ. Գ.) կողմը»։ Ավելացնենք սրան մի փաստ ևս. վերջերս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղին է հանձնվել մի հետաքրքիր փաստաթուղթ Արտաշես Կարինյանի և Երվանդ Գարագաշի ստորագրությամբ։ Այն վկայում է, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ունեցել է Հայաստանի սահմաններից դուրս գործող իր բյուրոն, որը կոչվել է արտասահմանյան և գործել է Մոսկվայում։ Այդ բյուրոն ունեցել է իր պաշտոնական բլանկը, որի վրա գրված է. «Երրորդ կոմունիստա-

կան ինտերնացիոնալ։ Հայաստանի կոմունիստական կուսակցության արտասահմանյան բյուրո» և կլոր կնիքը՝ դարձյալ «Հայաստանի կոմունիստական կուսակցության արտասահմանյան բյուրո» մակագրությամբ։

Այս փաստը կրկին խոսում է այն մասին, որ այդ կուսակցությունը իրոք ճանաչված է եղել որպես Հայաստանի կոմունիստական կուսակցություն և նրա բյուրոն, գործելով Հայաստանի սահմաններից դուրս, կոչվել է արտասահմանյան։

Այդ կուսակցությունն ունեցել է Թիֆլիսում լույս տեսնող իր «Կարմիր դրոշակ» թերթը, հայկական գործերի կոմիսարիատի հետ միասին հսկայական մարքսիստական դրականություն է հրատարակել, որը մեծ դեր է խաղացել մասսաների մեջ սովետական իշխանության գաղափարների պրոպագանդման գործում։

Երկրային կոմիտեի շատ անդամներ կարծում էին, թե Անդրկովկասում անկախ սովետական հանրապետություններ ստեղծելու լոզունգը և առանձին կոմունիստական կուսակցությունների ստեղծումը կարող էին պառակտում մտցնել Կովկասի բանվորության ինտերնացիոնալ համախմբման մեջ և սնունդ տալ բուրժուական նացիոնալիզմին։

Այս էր պատճառը, որ Երկրային կոմիտեն նույնիսկ ՌԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ որոշումից հետո էլ բացասական դիրք գրավեց Հայաստանի կոմունիստական կուսակցության նկատմամբ։ Այս էր պատճառը, որ 1920 թ. հունվարի 3-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն Վ. Ի. Լենինի նախագահությամբ կրկին անդրադարձավ Կովկասում կոմունիստական աշխատանքների հարցին և կրկին որոշեց, որ անհրաժեշտ է, որպեսզի «Ռուսական կայսրության նախկին սահմաններում փաստորեն կազմավորված «անկախ» հանրապետություններում կոմունիստական կազմակերպությունները աշխատեն որպես ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ»։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունն առաջինն էր Ռուսաստանում, որ արձագանքելով Լենինին, իրեն անվանեց կոմունիստական (ոչ թե սոցիալ-դեմոկրատական) և նրա ներկայացուցիչ Հայկունին էր, որ Վ. Ի. Լենինի հետ միասին ստորագրեց III կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման մանիֆեստը, այսինքն ՀԿԿ-ն հանդես եկավ որպես Կոմինտերնի հիմնադիր կուսակցություններից մեկը։ Վերը շարադրվածը վկայում է նաև, որ հետագայում ևս այդ կազմակերպությունը Կոմինտերնի կողմից ճանաչվել է որպես իրոք Հայաստանի կոմունիստական կուսակցություն։

Բուն Հայաստանի տերիտորիայում գործող կոմունիստական կազմակերպությունների միավորման ուղղությամբ առաջին խոշոր քայլը կատարվեց 1919 թ. սեպտեմբերին, երբ կուսակցության Երկրային կոմիտեի ղեկավարությամբ գումարվեց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցություն։ Քննարկելով երկրի առջև կանգնած խնդիրները, խորհրդակցությունն ստեղծեց ՌԿ(բ)Կ Արմենկոմ, որը լայն աշխատանք ծավալեց համահայաստանյան կուսակցական կոնֆերանս հրավիրելու համար։

1920 թ. Հունվարին Երևանում հրավիրվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը, որը խոշոր դեր խաղաց Հայաստանի կոմունիստական կուսակցության կյանքում։ Նա, փաստորեն, ավարտեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորու-

մը մեկ ընդհանուր ղեկավար կենտրոնի՝ Արմենկոմի շուրջը։ Արմենկոմի կազմում մտնում էին կուսակցության առավել աչքի ընկած գործիչներ Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Հ. Կոստանյանը, Ղ. Ղուկասյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Ա. Մելքոնյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշներ։

1920 թ. մայիսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության գլխավորությամբ զինված ապստամբություն բարձրացրին դաշնակ բռնակալների դեմ և երկրում հռչակեցին սովետական իշխանություն։

Մայիսյան զինված ապստամբությունը Հայաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, լենինյան գաղափարների հաղթանակի համար բանվորների ու գյուղացիների մղած պայքարի փայլուն էջերից է։ Այն ցույց տվեց, որ կոմունիստական կուսակցությունը խոր արմատներ է գցել ժողովրդական լայն մասսաների մեջ, որ նա միակ կուսակցությունն է, որ ընդունակ է ղեկավարելու և մինչև վերջ հասցնելու դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի դեմ Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը։

1920 թ. ամռանը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ձևավորվեցին որպես Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն, որն իր հանդես գալու առաջին օրից հանդիսանում է Լենինի ստեղծած կուսակցության մարտական ջոկատներից մեկը։

1920 թ. գարնանն ու ամռանն իմպերիալիստական պետություններն ակտիվացրին իրենց քաղաքականությունը Հայաստանում։ Սովետական իշխանության հաստատումը Ադրբեջանում, կարմիր բանակի հաջողությունները քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում և նրա զորամասերի մոտենալը Հայաստանի սահմաններին էլ ավելի կատաղի դարձրին իմպերիալիստական տերությունների ոտնձգությունները։ Արևմտյան տերությունները հայկական հարցը միշտ էլ օգտագործել են Թուրքիայի վրա ճնշում գործ դնելու համար և հենց որ պահանջվող զիջումն ստացել են, նրանք շատ արագ մոռացել են հայկական հարցի գոյությունը։ 1920 թ. ամռանը նորից ջրի երես դուրս բերվեց այդ քաղաքականությունը։ Մի կողմից սիրաշահելով Թուրքիային, մյուս կողմից նրանք կնքեցին Սևրի պայմանագիրը, որով հայկական պատմական տերիտորիաների մի զգալի մասը խոստանում էին տալ Հայաստանին։

Բայց իրականում ինչ էին տալու Հայաստանին։ «Ոչինչ,— զգուշացնում էր այդ օրերին Բաքվում հայերեն հրատարակվող «Կոմունիստ» թերթը,— բացի այն, որ նոր արյուն պիտի թափեն, ինչպես թափեցին Կիլիկիայում, ստեղծելով տասնյակ հազարավոր հայերի վերջին կոտորածը»[12]։ Դաշնակցականները չուզեցին հասկանալ, որ ինչպիսի իրադրություն էլ ստեղծվեր, միևնույն է, Սևրի պայմանագրով նախատեսված հողերը չէր տրվելու Հայաստանին, որ դա դիվանագիտական մի խորամանկ խաղ էր, որի նպատակն էր դաշնակցական Հայաստանը դարձնել իմպերիալիստների հուսալի հակասովետական պլացդարմ, իսկ Թուրքերին գրգռել Հայաստանի դեմ։ Եվ որովհետև Թուրքիայի ներխուժումն Անդրկովկաս չէր կարող չունենալ հակասովետական ուղղություն, ապա այն, Անտանտի հաշիվներով, պետք է առաջ բերեր ռազմական նոր կոնֆ-

12 «Կոմունիստ» (Բաքու), № 12, 2. VI. 1920։

լիկտ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև և Թուրքիան գցեր Անտանտի գիրկը։ Սա էր Սերի պայմանագրի չգրված հոդվածների բովանդակությունը։

Հայաստանը 1920 թ. աշնանը նորից ներքաշվեց ավերիչ պատերազմի մեջ։ Թուրքերի ներխուժումը Հայաստան Վ. Ի. Լենինը բնութագրեց որպես Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի դեմ ուղղված արշավանք։

Թուրքական բարբարոսները նորից ձեռնամուխ եղան հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանը։ Անցյալ դարի 70-ական թվականներին կանխամտածված և 90-ական թվականներից սկսված հայկական մասսայական ջարդերը, այսպիսով, շարունակվեցին մինչև 1921 թ. սկզբները և եթե չլիներ Սովետական Ռուսաստանը, հարց է, թե թուրքական նացիոնալիստները կդադարեցնեին հայերի բնաջնջումը, թե՝ ո՛չ։

Պարզից էլ պարզ էր, որ հայ ժողովրդի փրկության միակ ելքը երկրում սովետական իշխանության հաղթանակը կարող էր լինել, ռուս ժողովրդի հետ դաշինքի ամրապնդումը։ 1920 թ. նոյեմբերի վերջերին ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե Սարգիս Կասյանի գլխավորությամբ։ Հեղկոմի կազմում մտան Ա. Մռավյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Նուրիջանյանը, Ի. Դովլաթյանը, Ա. Բեգզադյանը։

Նոյեմբերի 29-ին Հայաստանում հաղթեց սովետական իշխանությունը։ Ապստամբ մասսաների խնդրանքով նրանց օգնության եկան հերոսական 11-րդ կարմիր բանակի քաջարի մարտիկները։ Մեծ Հոկտեմբերի արևը ծագեց հայոց լեռնաշխարհի վրա։ Հայ ժողովրդի պատմության մեջ բացվեց նոր դարագլուխ։ Վ. Ի. Լենինը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին ուղարկած հեռագրում անհուն բերկրանքով ողջունեց իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանին։

Չնայած նոյեմբերի 29-ին երկրում հռչակվել էր սովետական իշխանություն և դաշնակցական կառավարությունը. հայտարարվել էր տապալված, բայց վերջինս իր հոգեվարքի ժամին էլ հասցրեց դանակ խրել իր ժողովրդի թիկունքը՝ Թուրքերի հետ ստորագրել Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի խայտառակ պայմանագիրը։ Դա ահավոր ծանր վիճակի մեջ դրեց նորաստեղծ սովետական իշխանությանը և անբարենպաստ պայմաններ ստեղծեց սահմանային հարցերը վճռելիս։

Բոլոր հեղափոխությունների փորձով հաստատված է, որ իշխանություն նվաճելը ավելի հեշտ գործ է, քան այն պահելը։ Մեր ժողովուրդը չէր կարող իր նվաճած ազատությունը պաշտպանել երկրի հակահեղափոխական ուժերի ռեստավրացիայի վտանգից և մեզ շրջապատող ագրեսիվ ուժերի, առաջին հերթին թուրքական զավթիչների ոտնձգություններից, եթե Սովետական Ռուսաստանը օգնության ձեռք չմեկներ հայ ժողովրդին՝ նրա վերածննդի շեմին։

1921 թ. նոյեմբերի 6-ին «Իզվեստիան» տպագրեց Գ. Չիչերինի «Սովետական իշխանության արևելյան քաղաքականության մեկ տարին» հոդվածը։ Ահա թե ինչ է գրում նա դեկտեմբերի 2-ի պայմանագրի հետևանքով Հայաստանում ստեղծված վիճակի մասին. «Արդեն Հայկական սովետական կառավարության հռչակումից հետո, Թուրքիան դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում դաշնակցական կառավարության հետ կնքեց Հայաստանի համար անա-

սելի ծանր հաշտություն, ըստ որի, Հայաստանի նույնիսկ ձևականորեն անկախ մնացած մասը, փաստորեն լրիվ կախման մեջ ընկավ Թուրքիայից։ Այդ պայմանագիրը չհանաչվեց ո՛չ Սովետական Հայաստանի կողմից, ո՛չ էլ Միութենական Ռուսական Սովետական Հանրապետության կողմից, և նրա չեղյալ հայտարարելը դարձավ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հետագա բանակցությունների գլխավոր առարկաներից մեկը»։

Իսկ եթե Սովետական Ռուսաստանը անտարբեր մնար այդ պայմանագրի նկատմամբ, ո՞վ էր տալու մեղ ռազմական ուժ, ստիպելու Թուրքերին ետ քաշվելու Արփաչայի այն կողմը, ավելին, ո՞վ էր երաշխավորելու փաստորեն Թուրքերի ոտքի տակ փռված մեր երկրի անկախությունը։ Հիշենք, որ այդ օրերին Հայաստանը մի քանի հազար քառ. կմ տարածության մեջ պարփակված 750-հազարանոց մերկ ու քաղցած, անտուն ու անզեն որբերի մի երկիր էր։ Սովետական Ռուսաստանը, օգտագործելով իր ռազմա-քաղաքական և բարոյական ուժը սովետա-Թուրքական 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրն ստորագրելիս հասավ Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելուն։

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը խնդրում է Չիչերինին իրեն հայտնել հայերին սպառնացող ջարդի, հայ գաղթականների և Բաքվի համար Կարսի դերի մասին։ Դեկտեմբերի 14-ին Չիչերինը գրում էր Լենինին. «Դուք հարցնում եք հայերին սպառնացող ջարդի, հայ գաղթականների վիճակի և Բաքվի համար Կարսի դերի մասին... Այնքանով, որքանով խոսքը վերաբերում է հայ բնակչությանն ընդհանրապես, ապա մեր ամբողջ գործունեությունն այդ ուղղությամբ, ինչպես Ձեզ հայտնի է, նպատակ ունի կանգնեցնել Թուրքերի հետագա հարձակումը և ստիպել նրանց ետ քաշվել Արփաչայի այն կողմը՝ Կարսի մարզ... Մենք կարող էինք անել ավելին, եթե հնարավոր լիներ Հայաստան ուղարկել ավելի շատ զորք»[13]։

1921 թ. փետրվարին դաշնակցականները հակասովետական խռովություն բարձրացրին և, երբ Սովետական Ռուսաստանը Թուրքիայի հետ վարվող բանակցությունների ընթացքում ջանում էր չեղյալ հայտարարել Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի պայմանագիրը և հայկական պատմական տերիտորիաների գոնե մի մասը ետ վերցնել, հենց այդ օրերին Վրացյանի «Հայրենիքի փրկություն» կոմիտեն, որն ավելի ճիշտ կլիներ կոչել Հայրենիքի կործանման կոմիտե, դիմեց Թուրքերին՝ Թույլ չտալու Սովետական Հայաստանի ներկայացուցիչներին մասնակցելու սովետա-Թուրքական բանակցություններին և «իր» կառավարության հետ սկսել բանակցություններ՝ Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի դաշնագրի ոգով։

Ալ. Մյասնիկյանն այդ մասին գրել է. «Թուրքերի հետ մենք կարող էինք ավելի լավ պայմաններով կնքել պայմանագիր։ Բայց խանգարեցին չարագործները։ Եթե չլիներ դաշնակցական վերջին ավանտյուրան, մենք ավելի լայն սահմաններում կլինեինք»։

Դաշնակցականների ավանտյուրիստական քաղաքականությունը, այսպիսով, բախտորոշ նշանակություն ունեցավ Հայաստանի պետական սահմանների որոշման գործում։ Սակայն այսօր այդ կուսակցության ջատագովներն են ավելի բարձր գոռում պատմական անարդարության մասին և մեղքը բարդում կոմունիստական կուսակցության և Սովետական Ռուսաստանի վրա։

---

13 Տե՛ս մեր «Рабочее движение и национальный вопрос в Закавказье», էջ 385։

«Ամեն անգամ,— գրել է մեծ ինտերնացիոնալիստ Սերգո Օրջոնիկիձեն դեռևս 1922 թ.,— երբ տրորում են նացիոնալիստների, նացիոնալիստական ինտելիգենցիայի պոչը, նրանք անմիջապես սկսում են գոռալ, թե իրենց հակառակորդները հայրենիքի դավաճաններ են։ Թող դրանով մխիթարեն իրենց»[14]։

Նույնիսկ անգլիացի քաղաքական գործիչ Հարոլդ Բոքստոնը, որը Հայաստանում եղել է 1919 թ. և 1925 թ., օբյեկտիվություն է հանդես բերել և իր «Անդրկովկաս» աշխատության մեջ ճիշտ կերպով նկատել է, որ Սովետական Ռուսաստանն «ավելի շատ բան է արել հայերի համար, քան բոլոր արևմտյան տերությունները միասին վերցրած»։

Սովետական իշխանության 50 տարիների ընթացքում մեր ժողովրդի կյանքում արմատական սոցիալական վերափոխումներ տեղի ունեցան։ Այս շրջանում հայ ժողովուրդը կոնսոլիդացվել է որպես սոցիալիստական ազգ, ստեղծել իր ազգային բանվոր դասակարգն ու ինտելիգենցիան։ Երբեմնի հետամնաց ու ավերված մեր երկիրը վեր է ածվել ծաղկած սոցիալիստական ինդուստրիայի և առաջավոր գյուղատնտեսության երկրի։ Աննախընթաց կերպով զարգացել է հայ ժողովրդի հոգևոր մշակույթը, որը իր պատվավոր տեղն ունի ոչ միայն սոցիալիստական ազգերի, այլև համաշխարհային քաղաքակրթության մեջ։

Սովետական Հայաստանը կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության, մեծ Հոկտեմբերի գաղափարների կենսահաստատության վառ օրինակ է։

ОБРАЗОВАНИЕ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ И ПОБЕДА СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ

Г. А. ГАЛОЯН

Доктор исторических наук, профессор

Резюме

В статье рассматриваются некоторые вопросы данной проблемы: формирование армянской национальной буржуазии, появление пролетариата, возникновение политических партий и их отношение к национально-освободительной борьбе армянского народа; этапы рабочего и национально-освободительного движения; историческая роль Октябрьской революции в судьбе армянского народа, формирование КП Армении, историческое место «Коммунистической партии Армении» (т. н. «Группы Айкуни»); советско-турецкие отношения и армянский вопрос; роль Советской России и Коммунистической партии в освобождении армянского народа от векового гнета; национальное возрождение армянского народа.

Эти вопросы представляют не только научную и политическую актуальность, но и являются в нашей историографии проблемами, нуждающимися в глубоком марксистском анализе.

---

14 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 78։